

# Հ Ն Չ Ա Կ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

### ԴԱՐՁԵԱԼ ԶԷՅԹՈՒՆԻ ՄԱՍԻՆ.

Վերջին երկու շաբաթուայ միջոցին տեղի ունեցած մէկ-երկու անցքերը մեզ ստիպում են կրկին վերադառնալ Օւէյթունի պատմական արատաբութեան և կայացված հաշտութեան Պայմանագրի խնդրին:

Յայտնի է, որ այդ Պայմանագրի մի կէտի համաձայն՝ սուլթանն ընդունեց ու պարտաւորվեց՝ եւրօպական տէրութիւնների հաւանութեամբ մի քրիստոնեայ կառավարիչ նշանակել առանձնաշնորհված Օւէյթունի համար: Բայց այդ մեծ խորամանկը, որ և խարբախ է ուսաց տէրութեան շնորհով, ինքն իսկ թքեց իր ստորագրած սեփական անուան վրայ — երևի, հայրական օրինակ տալու համար իր հպատակներին, — փորձելով դրժել իր այն պաշտօնական պարտաւորութիւնը, որ ստիպվեց ընդունել, պարտութիւն կրելով Օւէյթունի հայկական բանակներից: Ինչո՞ւ է խնդիրը: Ահա: Վերջերս նա փորձեց հաստատել Օւէյթունում մի մահմետական կառավարիչ, փոխարէն քրիստոնեայի, ինչպէս Պայմանագրի արամագրութիւնն է: Անիրաւութիւնը բացայայտ էր: Այդ առիթով Օւէյթունցիները կատաղեցան ու բողոքեցին. բողոքեցին նաև Օւէյթունցիների հետ բանակցող եւրօպական հիւպատոսները. վերջապէս բողոքեցին նոյն իսկ եւրօպական տէրութիւնների դեսպանները Ա. Պօլսում: Պարս վրայ արինազարդ խալիֆան զգացված ազուէս հանդիսացաւ: Տեսնում էք, բանը նըրանումն է, որ փափկասիրտ միապետի առաջին հոգսը հայերի կեանքի և ինչքի ապահովութիւնն է, ինչպէս արդէն նա այդ ապացուցեց իր սարսափելի կոտորածով, և եթէ նա ուղարկում է Օւէյթունն ո՞չ թէ քրիստոնեայ, այլ մահմետական կառավարիչ, դա պարզապէս նրա համար, որ միւսիւլմանները չը զրգովին և հայերին նորից չը սկսեն կոտորել: Սատանան տանէ այն հային, որ այդպիսի բարեսրտութեան ապացուցներից յետոյ դեռ կը յանդգնէ աղուէսատիպ սուլթանի դէմ յարձակվել: Պա կը լինի կատարեալ անիրաւութիւն, և Համիդն — այդ Համո չաւուշը — այդ աննական առարկութիւնն անելով, ի հարկէ, հայի բարին է ցանկանում. այսինքն թէ հայը միւսիւլման պէտք է ուզէ, որով-

հետև եթէ նա դրա հակառակ՝ քրիստոնեայ կառավարիչ պահանջէ, ինչպէս իր իրաւունքն է, մահմետականները հայերին կը կոտորեն... Եւ այդպիսով, այդ արիւնոռուշտ խորհուրդն է դարձեալ թելադրում հէնց այժմից հրաշալի սուլթանըն իր մահմետական հաւատարիմներին: Արեան վառ գոյն ունեցող սուլթանական այդ առակներն, արդարև, զուրկ չեն յայտնի սրամտութիւնից, սակայն որպէս իրան պատասխանվեց, միւսիւլման կառավարիչ նշանակելու լինի, այն ժամանակ նա զրգուած կը լինի քրիստոնեաներին, բացի նրանից արդէն, որ ուղղակի ոտնակոխ արած կը լինի իր ընդունած Պայմանագիրը ևս: Բայց դա հաշիտակ չէ առնվում նրա կողմից, ինչպէս արդէն հաշիտակ չէ առնում նա հայ արեան ծովի անհամար կաթիլները:

Բայց այդպէս չեն մտածում, ի հարկէ, Օւէյթունցիները: Ապտամբական ուժով Օւէյթունն այսօր ձեռք բերեց յայտնի առանձնաշնորհումներ ու իրաւունքներ և նա մտադիր է պաշտպանել զրանք, մինչև որ զրանց իրազործումը կատարել տայ: Պա բացարձակաբար և այլ ևս անպոյտման կերպով իրաւացի մէկ ընթացք է Օւէյթունի կողմից: Ատարակոյս, այլ ևս մի սուլթան չէ, որ կարող կը լինի այդ իրաւունքը խլել Օւէյթունից, եթէ միայն, բնականաբար, եւրօպական պետութիւններն էլ կատարելու լինեն իրանց պաշտօնական պարտականութիւնը, որ արձանագրված է հաշտութեան նոյն Պայմանագրում: Եթէ այդ պետութիւններն անամօթաբար անցնելու լինեն մեր հրէշաւոր թշնամու կողմը և լքանեն Օւէյթունը ևս, ինչպէս լքեաբար լքանեցին ամբողջ Հայաստանը, այդ դէպքում, խօսք չը կայ, որ հայերիս դիմացը դերանացած կը լինի կրկին մէկ արդեւառիթ force majeure, որի դէմ մաքառելն ամեն ոչ-ժից վեր կը լինի արդէն: Բայց Օւէյթունցին պատրաստ է և պարտաւոր է մինչև վերջ պաշտպանել իր ձեռք բերած ու ճանաչված իրաւունքները, որքան էլ այդ իրաւունքները չը լինեն իսկ մեր ներկայ ազգային ձգտումների կատարեալ ամփոփումը: Այդ ընթացքը Օւէյթունի իրաւունքն է. այդ ընթացքը Օւէյթունի պարտականութիւնն է...

Անցնենք մէկ այլ խնդրի:

Հայ աղաւանները շատ կռիւացին Օւէյթունի դէմ նրա կազմած Պայմանագրի առիթով, թէև կարծում ենք, որ այդ կռիւոցներն այնքան կատաղի էին հէնց այն միակ պատճառով, որ Օւէյթունի ապստամբութիւնը, դրա ընթացքն ու ելքը կատարվեցաւ Հնչակեան Պուսակցութեան ձեռքով: Բայց անհերքելի է, որ Հայաստանի վեճակն այսօր միանգամայն տարբեր ու միտմարական կը լինէր, եթէ տեղի ունեցած լինէին այնտեղ մի քանի ուրիշ ապստամբութիւններ՝ Օւէյթունի նման: Ենչայանի է, որ պետութիւններն, ինչպէս և սուլթանը, այսօր ստիպված կը լինէին ճանաչել — և աւելի իսկ ընդարձակ կերպով — ամբողջ Հայաստանի իրաւունքները, ինչպէս ստիպվեցան ճանաչել Օւէյթունի իրաւունքները:

Ճիշդ է, որ Օւէյթունի այդ նոր ըէժիմի պայմաններն ընդհանուր առմամբ այն չեն, ինչ որ մենք կուզենայինք, ինչի մէնք ձգտում ենք բայց աչքի առջև ունենալով այն ծանր ու աննպաստ հանգամանքները և իրերի դրութիւնը, որոնց ցանցում կոտորածներից յետոյ ընկաւ հայկական դատը, սուլթանի զազանային յաղթանակի այդ միջոցին դժուարասպասելի էր այդպիսի մի Պայմանագրի համաձայնութիւն այն հրէշի կողմից: Եւ այսօր ակներև է, որ այդ Պայմանագրի ձեռք բերելը Օւէյթունի համար բացարձակ յաղթութիւն է, յաղթութիւն է նաև յեղափոխական զաղափարի, յաղթութիւն է նոյնպէս — թէև մասնակի — հայկական դատի:

Քննենք մի բօպէ այդ հանգամանքը:

Մարդկանց ցանկութիւնները, կամքը, տածած յոյսերը, ունեցած մտածումներն ու դիտաւորութիւններն իրանք իրանց բաւական չեն նրանց, մարդիկներին, այս կամ այն նպատակին հասցընելու համար: Այս մէկ աւելի խոր, մէկ աւելի ընդհանուր, մի հիմնական պայման, որը մարդկանց ձգտումները բերում հասցնում է միայն մինչև մի յայտնի կէտ: Արն է այդ պայմանը և որն է այդ յայտնի կէտի սահմանը: Եւ դրա պայմանն է — իրերի ընթացքի ու նրանց դրութեան զօրութիւնը, և այդ կէտի սահմանն էլ այն ծաւալն է, որի չափով կարող է տարածվել իրերի զօրութիւնը: Եւ այն պարագայում, երբ այդ զօրութիւնը չէ տարածվում մինչև մեր իսկական, մեր բուն նպատակի ծաւալը, մենք ստիպված ենք լինում ճանաչել իրերի զօրութեամբ գծված սահմանը, թէկուզ այն ճանաչել միայն ժամանակաւորապէս, այսինքն՝ մինչև որ առաջանում է իրերի նոր նպատաւոր դրութիւն, որը մեզ կարելի է դարձնում հէնց մի քայլ ևս և դարձեալ ու դարձեալ մի-մի քայլ մօտենալ մեր բուն նպատակին: Եւ հէնց այդ պատճառով է, որ մենք յայտնի բօպէում գոյութիւն ունեցող իրերի դր-

ութեան զօրութիւնը ճանաչելով հանդերձ, կանգ չենք առնում, այլ կրկին և կրկին շարունակում ենք ձգտել դէպի մեր նպատակի աւելի և աւելի ընդարձակ ու իսկական իրագործումը: Եւ նոյն իսկ իրերի ընթացքի զօրութիւնն է արդէն, որ մեզ շարունակ մղում է ձգտել աւելի առաջ և միշտ օգտվել իրերի նորանոր դրութիւնների նրպաստաւոր կողմերով մեր նպատակի իրագործման համար:

Եւ դրա լինելով ազգերի առաջադիմութեան համար մղված պատմական կռիւների ընթացքը, այլ ևս բոլորովին անտեղի է իմանալ ու լսել, թէ ինչպէս յեղափոխական այս-ինչ գործի ելքի վերաբերութեամբ մէկն ասում է «ո՛չ» և այն միւսն ասում է «այո՛» — և հէնց երկուսն էլ նոյն իրանց սեփական ձաշակի համեմատ: Արովհետև այդ «ո՛չ» -ն ու «այո՛» -ն միայն այն չափով և այն աստիճան նշանակութիւն ունեն, որ չափով, որ աստիճան նրանք ճշմարիտ ու արամբարանական մեկնաբանութիւն ու հետևութիւն են ո՛չ թէ սրա կամ նրա անհատական ձաշակի, այլ իրերի այն զօրութեան, որի մէջ տեղի ունեցաւ յայտնի գործը: Յեղափոխական մի գործի քննութեան միակ հիմնական ու ճշմարիտ կէտն այն է, որ յեղափոխականներս և ամեն-մի հայ աչքի առջև չը բերենք մեր սեփական անհատական համակրութիւններն ու հակակրութիւնները և ոչ էլ մեր սեփական փափազները, այլ թէ միայն իրերի յայտնի զօրութիւնն ունենալով մեր աչքի առջև, քննենք և որոշ ու ճիշդ, աւելին կասենք՝ անաչառ ու անկաշառ զաղափար կազմենք տեղի ունեցած գործի նշանակութեան ու իմաստի մասին:

Եւ հա հէնց այդ տեսակէտից և այդ հիման վրայ է, որ մենք կարող ենք ողջունել իբրև մի յաղթութիւն Օւէյթունցիների Պայմանագիրը: Եւ եթէ այդ առանձնաշնորհված, նաև ներքնապէս ինքնավար վիճակն այսօր այլ ևս ձեռք բերվեցաւ Օւէյթունի և իր շրջակայ մի քանի գաւառակների համար միայն, այդ չափն առայժմ մեզ համար մէկ իրական փաստ չէ՝ արդեօք եղբակացընելու, որ Օւէյթունն իր այդ նոր ըէժիմով, եթէ սա գործադրվէ, նախահիմք կը լինի նոյնօրինակ վիճակի մօտալուծ հաստատութեան աշխարհագրական մէկ աւելի ընդարձակ շրջանում, որ Օւէյթունի այդ նոր ըէժիմն այն կորիզն է, որի շուրջը կարող է մարմնանալ պտուղը, նոյն ըէժիմը սրբփովելով ու տարածվելով այլ գաւառներում ևս: Բայց, ի հարկէ, ինքն ըստ ինքեան հասկանալի է արդէն, որ այդ տարածումը շուտ իրագործելի դարձնելու համար, որպէս նաև աւելի ընդարձակ քաղաքական հիմունքների ու իրաւունքների հաստատման հասցնելու համար, դարձեալ և դարձեալ պէտք է անվհատ ու յարատև յեղա-

փոխական աշխատութիւն որոշ ուղղութեամբ և սահմանված նախադժով: Սակայն այն ևս իրողութիւն է, որ այսօր, Օւթթուրի պատմական յաղթութիւնից յետոյ, աւելի ընդարձակ նպատակի էլ հասնելն այլ ևս ժամանակի ինչոք է և, աւելացնում ենք շեշտելով, կարձ ժամանակի ինչոք, եթէ միայն եւրօպական քաղաքականութեան նորանոր բարդութիւններ բացարձակ արգելք չը հանդիսանան այդ հաշիւներին: Թէև Օւթթուրի գործը չէ մի լուծումն հայկական դատի ընդհանրապէս, բայց նա իրապէս զճաղրեց, որոշեց այդ լուծումը, դրա ուղղութիւնը: Աս դարձաւ մեկնման հաստատ կէտը մեր դատի լուծման:

Ահա դրանք են Օւթթուրի ապստամբութեան կատարած գործը, նրա անմիջական արդիւնքը, նրա հետևանքը, և այդ գործի մեծ նշանակութիւնն ու պատմական դերի իմաստն անժխտելի է:

Բացի այդ բոլորի, կայ նաև մէկ ուրիշ պարագայ, որն էլ իր կողմից մէկ այլ տեսակ մեծ իմաստ ու հիմնական նշանակութիւն է տալիս Օւթթուրի ապստամբութեան: Պա էլ այն է, որ այդ շարժումից առաջ եկած գործը, նրա արդիւնքը պարտական ենք բացառապէս յեղափոխական մի շարք փայլուն յաղթանակներին, բացառապէս յեղափոխական զէնքին, յեղափոխական գործունէութեան: Միայն և միայն հրմտութեամբ վարած յաղթական ապստամբութեան, որպէս և հաշտութեան բանակցութիւնների իրագէտ ընթացքի շնորհով է, որ այսօր Օւթթուրը յայտարարվում է տէր իր ներքին ինքնուրոյնութեան և կարող է հանդիսանալ նախաշաւիղ նոյնօրինակ վիճակի հաստատման աշխարհագրական աւելի ընդարձակ սահմանների մէջ:

Աւ ուրեմն այսօր մի քանի տեսակէտից է, որ մեր, որ ամբողջ հայութեան կողմից միթարանքով պէտք է ողմունվէ Օւթթուրի նոր ինքնուրոյն ընթացքը և հայոց Պատմութեան մէջ ոսկէ տառերով արձանագրվէ հայկական յեղափոխութեան այդ ամենափառաւոր երեսը, Օւթթուրի հերոսական ապստամբութեան ամբողջ պատմութիւնը և նրա բոլոր հերոսների այլ ևս անմահ անունները:

Օւթթուրը հայութեան ազատութեան երազն էր և Օւթթուրիցին՝ այդ երազի իրականացնողը. այսօր առաջինն այլ ևս այդ ազատութեան օրօրանն է և երկրորդը՝ մեր ազգային հերոսը: Արկուն էլ, Օւթթուրը և իր զաւակը, կատարեցին և այսուհետև էլ կը շարունակեն կատարել իրանց պատմական փառաւոր դերն ու կոչումը:

Աւ քանի Օւթթուրի պատմական դերն ու գործն այդ է, ահաւանքը թող կռկուն — դա՛ս դրանց դերն է, և եթէ սուլթանն էլ փորձելու

լինի չը կատարել Պայմանագրում նշանակված իր պարտականութիւնները — դա՛ս էլ հօ նրա դերն է, որի առիթով, սակայն, նա նորից մէկ աւելի ազգու դաս կաննէ Օւթթուրից, և հայկական դատը չի խորտակվել երբէք:

Այն ազգը, որ ունի մի Օւթթուր, նա կարող է ունենալ նաև երկրորդը — նա կորած չէ և չի կորչել:

**ՁԵՑԹՈՒՆԻ ՀԱՅՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԸ.**

1) Օւթթուրիցիները անպայման կերպով կը մերժեն յանձնել Օսմ. կառավարութեան իրենց Հնչակեան պարագլուխները:

Ժանթ. — Հակառակ պարագային Ձէթուրիցիները կը սպառնան շարունակել պատերազմը: Ձէթուրիցիներն այդ նպատակով ցուցնո արին արդէն:

2) Օւթթուրի Հնչակեան վեց պարագլուխները պիտի ձգեն օսմանեան հողը: Բ. Գուռը երշխաւորութիւն կը տայ վեց Պետութիւններու Կ. Պոլսոյ Գեսպաններուն, որ այդ Հնչակեաններու մեկնումը մինչև Եւրոպա պիտի կատարուի ապահով ու անվնաս կերպով և հարկ եղած պատուով, Օսմ. Տէրութեան ծախսով:

3) Բանակցող Հիւպատոսներու միջոցաւ Գեսպանները երաշխաւորութիւն կը տան վեց Հնչակեան պարագլուխներուն յօդ. 2-ի ձգբիտ գործադրութեանը, նոյն եղանակաւ, որպէս կը կատարուին եւրօպական հրպատակներու և հիւպատոսներու նկատմամբ:

4) Պատարեալ և ամբողջական ընդհանուր ներում (amnistie) ո՛չ միայն Ձէթուրիցիներուն, այլ և այնտեղ ապաստանած գիւղացիներուն, ճամբորդներուն և հայ հրոսակային խումբերուն:

5) Պիտի հաստատուի մի քրիստոնեայ կառավարիչ, որ պիտի ընտրուի եւրօպական Պետութիւններու հաւանութեամբ:

6) Օւթթուրի ոստիկանութիւնը, հարկահանները, ոստիկան-ղնւորները (gendarmierie) և կառավարական պաշտօնեաները պիտի ընտրուին և կազմուին նոյն իսկ Ձէթուրիցիներէն:

7) Օւթթուրիցիները չը պիտի վճարեն յետամնաց տուրքերը (պագայէ) և հինգ տարուայ պայմանաժամով տուրք վճարելէ ազատ պիտի լինին:

Ժանթ. — Ձէթուրը ունէս իբրև պագայէ (յետամնաց) ամեն տեսակ տուրքերէ, — ինչպէս օր. տասանորդական, զինուորական, կալուածական, եւ այլն, — նոյնպէս եւ փոխառութեան երկրագործական դրամատնէն (պանքայէն), 70-էն մինչև 100 նազար օսմանեան ոսկի:

8) Հաստատումն հարկերու համեմատական դրութեան. — իւրաքանչիւրի կարողութեան համեմատ:

9) Օւթթուրիցիներու կեանքը, ինչքը, պատիւը և կրօնական ազատութիւնը կապահովուի և կերաշխաւորուի եւրօպական Պետութիւններու կողմէն:

10) Օւթթուրն ապաստանած բոլոր հայ գիւղացիներու, ինչպէս և թիւրքիոյ այլ վայրերէն եկած և այնտեղ գումարուած բոլոր հայ խումբերու և անհատներու ապահով և անվնաս վերադարձը իրենց տեղերը պիտի կատարուի բանակցող հիւպատոսներու անմիջական հսկողութեան տակ:

11) Օւթթուրիցիներու ձեռքով զօրանոցէն գրաւուած պատերազմական զէնքերու (մարթիկներու և երկու թնդանօթի) յանձնումը Օսմ. կառավարութեան, այն պայմանով սակայն, որ Ձէթուրի շրջակայ գա-

ւաններու ամեն թիւը և շէքքէլ զիւղացիներէն նոյն-  
պէս վերցուին նոյնօրինակ զէնքերը: Զէյթունցիներ-  
ուն պիտի մնան իրենց սովորական զէնքերը:

12) Համաձայն Զէյթունցիներու մերժման՝ ասոնք  
չը պիտի վերաշինեն այրուած զօրանոցը. այդ վերաշի-  
նութիւնը կը վերաբերի Օսմ. կառավարութեան:

13) Օսմանեան բանակը պիտի ձգէ Զէյթունի  
գաւառը և հեռանայ. միայն արտաքին յարձակումնե-  
րու դէմ պահպանութեան համար պիտի մնայ մի գունդ  
ղինուոր. այդ գունդը որ և է իրաւունք չունի միջամբ-  
տելու Զէյթունի բոլոր ներքին գործերուն և անոր  
խաղաղութեան պահպանման:

14) Եւրօպական բանակցող Հիւպատոսները Զէյ-  
թունէն չը պիտի մեկնին մինչև ներկայ Պայմանագրի  
տրամադրութիւններուն անթերի գործադրութիւնը:

Ժամօթ. — 14 յօդուածին համաձայն Զէյթունցիներու կողմէ  
պաշտօնական բանակցողները պահանջ ունին նաև մեծագա-  
լին նրաշխարհութեան պայմանի մը արժանագրութիւն Զէյ-  
թունի նոր ընթացի պահպանման համար ընդդէմ ամեն անա-  
կանականերու Օսմ. քաղաքական և զինուորական իշխանութիւն-  
ներու կողմէ:

15) Եւրօպական Պետութիւնները Մարաշի մէջ  
հիւպատոսարաններ պիտի հաստատեն. ասոնց պաշտօ-  
նը պիտի լինի հսկել Զէյթունի նոր ընթացի պահ-  
պանութեանը, մշտական գործադրութեանը և կիրա-  
ռութեանը:

16) Հաշտութեան ներկայ պայմաններու գործա-  
դրութիւնը երաշխաւորուած է վեց Պետութիւններու  
Դեսպաններուն և Բ. Գրան միջև կնքուած պայմանա-  
գրով:

Ընդհ. ժամօթ. — Ներկայ պայմանագրին բոլոր տրամադրու-  
թիւններու զօրութիւնը կը տարածուի Զէյթուն քաղաքի և իր  
ընդհանր 100-ի մօտ գիւղերուն վրայ, ասոնց մէջ հաշտելով 10-ի  
չափ թիւրքաբնակ գիւղերը ևս:

### ՉԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ. ԲԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.

1895 ՆՈՅՄԲԵՐԻ 24-ԻՆ — 1 ՓԵՏՐՎԱՐ 1896.

(Շարունակութիւն) 1)

ՖՈՒՆՈՒԶԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՐԱՆ. —  
ԹԵՔԻՐԻ ԿՈՒԻԷ. — ԲԱՆԱԿԻ ՔԱՅԼԸ ԶԷՅԹՈՒՆԻ  
ՎՐԱՅ. — ՆՈՐ ԲԱՆԱԿԱՏԵՂՆ ԱՌԿԱՆ  
ԵՒ ՀԱՅԵՐԻ ԴԻՄԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ. —  
ՍՊԻՏԱԿ ԶԻԱՒՈՐ ԵՒ ԹՈՒՐ-  
ՔԵՐՈՒ 3 ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵ-  
ՐԸ. — Ս. ՓՐԿՉԻ ՎԱՆ-  
ՔԻ ԱՌՈՒՄԸ ԹՈՒՐՔԵՐՈՒ ԿՈՂՄԵ ԵՒ ԻՐԴԵՅՈՒԻԷ.

Գեկտ. 1, Ուրբաթ օր իրիկնադէմին հրացանի խուլ  
որոտներ լսելի եղան ֆրանսուզի կողմէն:

Գեկտ. 2, Շաբաթ առաւօտ երկու սուրհանգակ  
ֆրանսուզի կողմէն կը խուճապէին դէպի զօրանոց. դո-  
ցա մին Տնտեսեան Մարգար աղան էր և միւսը «Աւ»  
զօրագնդէն Այնթապցի Ներսէս Գաղանձեանը:

Սուրհանգակներէն մէկը կարողացանք քաղել ըն-  
դարձակ տեղեկութիւն, թէ Սիսնէի բանակը յարձա-  
կումը գործեր է ֆրանսուզի վրայ և թէ պէտք էր օգ-  
նութեան հասնել նորան:

Պ. Աղասին իջնելով Զէյթուն իսկոյն կազմեց պա-  
տերազմական ժողովը, ուր որոշուեցաւ, որ կարկալարի

1) Տես «Նշակ» 1895 թ. 23, 24 և 1896 թ. 1, 2, 3 և 8.

թաղէն 60 կորիճներ պ. կարապետ Տէր-Յակոբեանի  
հրամանատարութեան ներքև ֆրանսուզին օգնութեան  
գնան:

Շաբաթ օր, առաւօտեան դէմ, ժամը երկուսը ու  
կէսին, առնելով մի բեռ ուղղամութեք, հայկական զօ-  
րագունդը մեկնեցաւ դէպի ֆրանսուզ:

\* \* \*

Նոյն օրը հայկական զօրագունդը Թէքիրի մօտ  
հանդիպելով շէքքէյներու Սէկմէնին, որն այդ կողմէն  
կարշաւէր ֆրանսուզի վրայ, պատերազմի կը բռնուի, որ  
կը տևէ 2 ժամ: Ապանելով 15-ի մօտ շէքքէյ, այս  
վերջինները ետ կը նահանջեն ու կը փակին Չուգուր-  
Հիարի կողմը: Ճանապարհին հայկական զօրագնդին  
միացած էին Քիրէճի և Տէյիլմէն-Տէրէի հայ գիւղա-  
ցիները: Այդ օր շատ կատաղի էր ֆրանսուզի պատե-  
րազմը և մէկը Զէյթունէն որոտի նման կը լսէինք հը-  
րացաններու և թնդանթներու ձայնը:

\* \* \*

Նոյն օր հազիւ թէ կարկալարի զօրագունդը մեկ-  
նած էր ֆրանսուզի օգնութեան: Արդանլըի պահակ-  
ները չորսն ալ միասին հեւալով հասան զօրանոց, որ  
թրքական բանակի ձիաւոր յառաջադաս խուճմը (escar-  
mouche) անցաւ վարդապետի կամուրջը, և թէ բա-  
նակն սկսաւ ձգել իր վրանները:

Պ. Աղասին թողուց զօրանոցի պահպանութիւնը կու-  
սակցութեան արի գործիչներէն պ. Մլէհին, որ այդ օր  
մի քիչ հիւանդ էր և ինքը իսկոյն լուր ուղարկեց Զէյ-  
թուն, և ժողովուրդը որոշուած կարգադրութեամբ ըս-  
կաւ դիմել զօրանոց:

Իւրաքանչիւր իշխան իր պատերազմիկներով դի-  
մեցին որոշուած անցքերը: Պ. Աղասին իր հետն առ-  
նելով զօրանոց մնացած «Աւ» զօրագնդի տասի մօտ  
անդամները դիմեց դէպի ջերմուկի գաշտը. իր հետն  
էին Սարգիս աղա Նորաշխարհեանը, Պապ աղա Աւ-  
սիլոսեանը, Աւետիք Էֆէնդի Վիսխանեանը, Աւագ աղա  
Չաքրեանը, Մէրկէնեան շաճին և ուսուցիչ Պ. Յով-  
հանէս Ահարոնեանն, որ մինչև վերջ բոլոր ուսու-  
ցիչներու մէջ անխախտ և արի կերպով պատերազ-  
մեցաւ մեզ հետ:

Սրբա անցան Ս. Փրկչի վանքի գիւղը. իրենց հետն  
էին 200-ի մօտ քաջեր, որպէս յառաջագնաց խուճմը,  
որոնց մեծագոյն մասը ձիաւորներ էին: Պէտք էր այս-  
տեղէն ուղարկուէր հայկական բանակի շարժման բո-  
լոր հրամանները:

Թշնամի բանակը ճիշդ կէս օրուայ մօտ սկսաւ  
երևան գալ իր 60,000 զօրքերովը: Նա իր այդքան  
ստակացուցիչ մեծութեամբը վախեցած էր անցնիլ Ղը-  
լավուզ-Տէրէի ձորէն, այլ անցնելով կամուրջէն,  
ճիշդ գետի ափէն բացած էր մի նոր ճանապարհ և  
բարձրանալով Բէշէնի դաշտերն ու հողաբլուրները,  
այդ ուղղութեամբ եկաւ և բանակ դրաւ ջերմուկի  
դաշտէն երեք բառորդ ժամ հեռու Ախվախ ասած  
տեղը, որ մի ընդարձակ դաշտագետին է, ցանցառ  
մացառներով շրջապատուած:

Մի կողմէ սկսան զարնել վրանները և միւս կող-  
մէ սկսան յառաջանալ առաջագնաց խմբերը: Չիաւոր  
խուճմը, մօտաւորապէս 500 հօգի անցնելով մեծ ձո-  
րը սկսան յառաջանալ ուղղակի ջերմուկի կողմի Եղիտ-  
լէր ասած հայաբնակ գիւղը, որ է շէք-Մէյ տանիի  
լեռնային անցքի ստորոտն էր շինուած, իսկ միւս հե-  
տևակ խուճմը, որ բարկացած էր կանոնաւոր զին-

ուորներէ և բէշէնցի ու բերդուցի բաշխողու գներէ մօտ 2,000 հօգի, սկսան բարձրանալ դէպի ս. Փրկչի կողմը: Թշնամիի մտադրութիւնն էր գրաւել վանքն ու իր շրջակայ գիւղերը, որոնք իրեն լաւ ապաստանարաններ էին այդ ցուրտ եղանակին:

Ապիտակ ձիաւորը. — ձիախուժքի առաջն էր սա, որն ինչպէս կերևար մի նշանաւոր սպայ էր յանդուգն ու շատ աներկիւղ չը նայելով, որ կարկուտի նման կապար կը տեղար հայերի կողմէն, խրախոյս տալով իր զինուորներուն անխախտ կերպով առաջ կը քշէր իր ձին դէպի գիւղ: Եղիտէր գիւղի մէջ ապաստանած էին Բօղ-Բայրիցիներն ու Կարկալարցիները, սորա որոնք Զէյթունի իժերն ու ագուսները կը համարուին, չը կերցնելով իրենց գոռոզութեանը, դուրս եկան աներէն և յառաջացան ժայռերու ետև և սկսան բիւրաւոր գնդակներ տեղալ թուրքերու վրայ, միւս կողմէ յայտնի 2օլաքեան Փանոսը, որ միշտ կասէր, «ոչ մի աւազակային կուրի չեմ մասնակցած, բայց սա Հայրենիքի պատերազմն է» մի խուժք ձիաւորներով, անհամար գնդակներու մեջէն շրջանակաձև կտրեց և անցաւ թշնամուոյն ձախակողմը մի բլուրի ետև, մօտ 5 վայրկեան հեռու Բօղպայիցիներէն և սկսաւ կարկուտի նման գնդակներ տեղալ թշնամիի կողքէն: Թշնամին այլ ևս չի կարողանալով դիմանալ, ետ ընկրկեցաւ, գետինը թողով 6-7 դիակ: Հայերէն ոչ մի մնաս:

Իսկ թշնամիի հետևակ գունդը, անցնելով ձորը արտերու մէջէն երեքի բաժնուեցաւ և սկսաւ եռանկիւնաձև պաշարել վանքի մէջ ապաստանուած Հայկական ամենաընտրեալ ձիախուժքը: Տուաւ, կուսակցութեանս ներկայացուցիչը յայտարար նշանը և սկսան կատաղի հրացանաձգութեան քարերու և տներու ետևէն: Մէկ ժամ հրացանաձգութեան միջոցին թըշնամին 30-ի մօտ դիակներ ձգելով ստիպուած եղաւ նահանջել: Պատերազմի միջավայրը 300 մէթրօ կար:

Թշնամին լաւ նկատելով, որ Հայերը ռազմական ընտիր գիրքեր են գրաւած և վարպետօրէն բաժանուած, լաւ հասկացաւ թէ Մարաշի խոսնիճազանձ Հայ ամբօխը չէ իր դիմացը, հետևաբար սկսաւ աւելի ուժեղ ու լուրջ քայլ առնել: Հետևակ խմբին ուղարկեց օգնութեան մօտ 3 թապուր (3,000) զինուոր չորս լեռնային Կրուքի թնդանօթով. իսկ Բէշէնի բլուրներու ետևէն, որ անտեսանելի էր Հայերուն՝ առաջացուց 2,000-ի չափ զինուորներ:

Ձիախուժքի կողմն ուղարկեց մօտաւորապէս նախկինն չափ: Վանքը ձիախուժքի կռնակը լինելուն ըստիպուած էր աւելի մեծ ոյժ գնել սորա դիմաց:

Ձիագունդը, անվեհեր սպիտակ ձիաւորի խրախուսով, աւելի կատաղի յարձակում գործեց, բայց դարձեալ իր կողքէն նախկինէն աւելի մնաս կրեց և ստիպուած եղաւ ետ նահանջել մի ժամ որոտանման հրացանաձգութենէ յետոյ:

Միաժամանակ յարձակում գործեցին 5,000-ի մօտ հետևակ զօրքերը և սկսան ռաբակոծել վանքն ու մօտակայ շէնքերը: Մէկ ժամ սոսկալի պատերազմէ յետոյ, ստիպուած եղաւ թշնամին կրկին նահանջել, մանաւանդ որ Բէշէնի բլուրներէն դեռ 2,000 զինուորները մէկ ժամ վերջ միայն կարող էին հասնել ու վանքի վերևի կողմէն շրջապատել: Թշնամին այս անգամ ևս աւելի կորուստ ունեցաւ:

Իրիկնադէմին, թրքական ժամը 10-ի միջոցին, թըշ-

նամի բանակը գործեց երրորդ յարձակումը:

Նախապէս առաջացաւ սպիտակ ձիաւորը և հագիւթէ մի քանի վայրկեան շարժում գործեցին և ահա Զօլաքեանի գնդակով գլորուեցաւ այդ անվեհեր թըշնամին. իր ետևէն նոյն վայրկեանն ընկան երկու ձիաւոր ևս: Ձիագունդը կորսնցնելով իր հրամանատարները, ստիպուեցաւ փախուստ տալ, մինչև մեծ բանակատեղն, Ախվախ: Սպիտակ ձին աւար ինկաւ հերոս Զօլաքեանի, որ անոր վրայ մինչև վերջ կը հեծնէր:

Իսկ Վանքի վրայ սկսան յարձակում գործել, նախկիններէն խիստ աւելի կատաղութեամբ: Թէպէտ ինկան տասնեակ զինուորներ, բայց երբէք չընկրկեցան. որովհետև հասած էր այդ միջոցին Բէշէնի բլուրներէն 2000 զօրքերը և Վանքի ետևէն (վերևի կողմէն) պաշարելով բիւրաւոր գնդակներ կը տեղային հայ քաջ խմբի վրայ: Միւս կողմէն վանքի պատերը քարաշէն լինելուն ռուժմերը մեծ մնասներ հասուցին և խորտակեցին հայկական խմբի պատասպարանները: Կիւրը սոսկալի կատաղութեամբ աւելց մինչև ժամը 11-ու կէսը Հայկական ձիախուժքը խիստ նեղ գրութեան մէջ էր, մանաւանդ այն տեսակետով, որ 7000 զինուորները, կամաց-կամաց կը յառաջանային շրջանակաձև պաշարելու, դա այն վախճանին կը հասնէր, որ ձիագունդը փախուած պիտի մնար վանքին ու մի քանի տներու մէջ և հաղորդակցութիւնը խղուելով Զէյթունի հետ առանց ռազմավթերքի ու քաղցէն պիտի կոտորուէր այն տեղ. ստիպուած էին տեղի տալ. և չէր կարելի նոր ոյժ բերել, քանի որ կուրի միջավայրը շատ անյարմար էր և դաշտային. հայկական ձիագունդը հերոսական յարձակումով՝ ձեռքեց զօրքերու յետակայ շըլթան, և գնդակի տարափի մէջէն անցաւ մեծ ձորը և ապաստանեցաւ Մուրթատլար հայաբնակ գիւղը վառելով միայն, բացի վանքը, սորա շրջակայ մի քանի տները. իրենք իրենց ձեռքով վանքը վառել չէր ներեր իրենց կրօնական ջերմ զգացումը: Բայց զօրքերը խուժելով վանքի մէջ, իրենք վառեցին զայն: Եթէ բէշէնցի, քէրդմէնցի ու բերդուցի թուրք բաշխողու գներն առաջ խուժէին, չէին թողուր, որ վանքը վառէր, որովհետև սոցա ևս ուխտատեղին էր Հայոց վանքը և թէ քանիցս հաւատացած էին սորա «հրաշագործութիւններուն»: Զօրքերը ունեցան մեծ ջարդ, հայերէն մէկ հօգի միայն ձախ թուէն թեթևապէս վիրաւորուած էր Զօրքերը փորձեցին անցնիլ Մուրթատլար գիւղ, բայց կատաղի դիմադրութիւն գտնելով, ստիպուած եղան նահանջել: Վանքի և գիւղի միջավայրը հագիւ 5 վայրկեան կար:

Պիշերը վրայ հասաւ: Ամեն բան հանդարտեցաւ. պատերազմը վերջացաւ մեռալային լուռութեամբ, երկարատև սոսկալի կռիւներէն վերջ: Անմոռանալի է ատոր թողած տպաւորութիւնը. իսկապէս դա պատերազմ չէր, այլ մի տեսակ որոտ, որ անձրևի տեղ գնդակ կը մաղէր օդին մէջ և ծուխը մառախուղներման կը վերանար, պարզելու բռնապետն ու ստրուկը, որը հրացանի ձայնով ցոյց կը տար իր դժգոհութեան բողբոջն ու արգարութեան պահանջը:

Ամեն բան լուց, բացի թրքական բանակի սովորական ազմկալի ժխորը, որ հեռուէն խուլ կերպով կը լսուէր: Վառուեցան երկկողմանէ բիւրաւոր կրակներ, գոգցես այդ օր երկնքի անհամար աստղերը վար իջած էին, «վերջին դատաստանի» նման. և իսկապէս սա ալ Զէյթունի վերջին դատաստանն էր բռնութեան

դէմ: Անհամա կրակներու մէջ միայն արևի նման կը վառուէր Ս. Փրկչի վանքը և իրաւամբ ղէյթուն-ցիները կազադակէին «ալ չենք վախնար, Փրկչի ետեւէն կրակը գրին, Փրկչին ու Մէհէմէդը կիւլէշի (մենամարտութիւն) բռնուեցան, ալ թող Փրկչից խորհի, եթէ յաղթուի, ամօթը իրն է, մենք ինչ ա-նենք... Սա ծաղրական խօսք է, ալ ժողովրդի ջերմ հաւատքը:

Այդ օր ֆրանուզի պատերազմի ձայնը խիստ կատարորէն արձագանք կը տար Զէյթունի լեռներու վերայ. ոչ մի որոշ հետեանք չէր կարելի գուշակելի՛ ոչ մի լուր ալ չը կար: Յայտնի էր թէ ամեն ընդի-մադիր կողմ, եր բազար աջող կուզէր տեսնել:

(կը շարունակվի.)

SOROSI.

**ՖՈՆՈՒՋ ԵՒ ՇՐՋԱԿԱՆԵՐԸ.  
ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ԱՌԱՋ.**

Նոյեմբերի վերջին շաբաթը մեր յաղթական արշաւանքները կանգ էին առած ձիւնի, անձրևի, ցուր-տի պատճառով:

Հնչակեան յաղթական բանակներն երկու ամ-սուայ ընթացքի մէջ անընդհատ արևմտից և նշանա-ւոր պատերազմների շնորհով գրաւեր էին մինչև 2, 3-4 օրայ հեռաւորութեամբ վայրեր: Ազգային եռա-գոյն և յեղափոխական կարմիր դրօշակները, որպէս երկու անբաժան սիրականներ և միանգամայն կարա-պետներ, յաղթական կերպով բարձրացած էին Չո-խախի և Կօկիսոնի Ձերքեղաբնակ լեռների բար-ձունքների վրայ, ծածանուած էին Անտերուսի գայժա-գամութենէն աւելի հարաւ՝ Ատանայի կուսակալու-թեան համբաւաւոր դաշտագետնի վրայ՝ մինչև Գարս-Պազարի մօտերը. գրաւուած էին մինչև Ենի Ճէ-Գալէի միւստիւրութիւնը, Ղայիշ-օղլի բռնապետի գիւղերը՝ Մարաշի դէմ առ դէմ, այնպէս որ Մարա-շը երեք կողմէն փակուած և պաշարուած, միայն արև-ելեան կողմէն էր բաց մնացած:

Այդ վերջին օրերը մեր կեդրոնավայրերն էին ե-ղած Զէյթունն ու Ֆռնուզը: Շրջակայ բոլոր հայ գիւղերի բնակիչները հաւաքած էինք սոյն երկու գըլ-խաւոր կէտերի մէջ, իրենց գոյքերով, չորքոտանիսե-րով միասին, այնպէս որ իւրաքանչիւր տան մէջ մի-ասին կապրէին մի քանի ընտանիքներ, մօտակայ արօ-տատեղիները լեցուած էին տանտեակ հազարներով այծեր, ոչխարներ, կովեր և այն:

Նոյ. 28-ին «Աւ» զօրագնդի զինուորների մի խմբի հետ Զէյթունէն ճանապարհ ինկանք դէպ ի ֆրո-նուզ հոն ևս վարչական կարգադրութիւններ անելու համար: Մեզ հպատակուած էին արդէն շրջակայ 5-6 թրքական գիւղեր, որոնց բնակիչներն իբր եղբայր կապ-րէին Հայերի հետ, վայելելով հաւասար իրաւունքներ և հաւասար օրէնքներ:

Արդէն ամէն կողմեր հիմնած էինք հայկական կա-ռավարութիւն, դատարաններ, ոստիկանութիւն գի-շերուայ և ցերեկայ համար, որսորդական խմբեր լեռ-ների և կարեւոր անցքերի վրայ, բոլորը ժողովրդի կողմէն, ազատ քուէով ընտրուած, միշտ Հնչակեան գործիչների առաջնորդութեամբ և ղեկավարութեամբ: Զէյթունն իր շրջակայ 90-ի չափ գիւղերով մի փոք-րիկ ռամկավարական երկիր, ասիական Զուլիջերիան էր դարձած՝ սնանկացած թիւրքիայի փտած սրտի մէջ-տեղը: Իւրաքանչիւր օր տեղի կունենային քաղաքա-

կան և զինուորական ժողովներ՝ խորհելու, կարգադր-րելու պատերազմական և այլ կենսական գործերը: Ժողովները, վճիռները, գործադրութիւնը առաջ կը գը-նային կատարելու կարգապահութեամբ, զարմանալի ճըշ-տութեամբ և արագութեամբ, գուցէ հազար անգամ աւելի կանոնաւոր քան սովորականի երկտըզ քէօշլի փա-շայական ժողովները:

Ուլիիոյ հայ ժողովուրդն երջանիկ էր, ամենքը կը կրկնէին, ղկուղենք միշտ այս գրութեամբ ապրել կամ մեռնել: Երբերն ու պառաւներն աղօթելով փառք կուտային, որ այս երջանիկ օրերին են հասեր:

Մինչև այդ ատենները մեր նշանաւոր արշաւանք-ներէն, կատաղի պատերազմներէն յաղթահարուած, քանիցս ետ մղված, մեր թշնամին չորս առանձին վայ-րեր բանակ էր դրած, ուր հետզհետէ կամիոսիէր իր պատերազմական վերջին ոյժերը մեր վրայ քալելու համար: — Առաջին բանակը, արևելքի կողմէն, դրած էր Մարաշի և Զէյթունի մէջտեղը, Ճիհանի Մահ-րասա կոչված կամուրջի միւս ափի վրայ, Զէյթուն-նէն 4 ժամ հեռաւորութեամբ: Երկրորդը, հիւսիսի կողմէն, Էլպիստանի մօտերը, Զէյթունէն 13 ժամ հե-ռի: Երրորդը դէպի հարաւ, Ղայիշլի մօտերը Զէյ-թունէն 22 ժամ հեռի: Չորրորդը դէպի արևմուտք, Կապանի և Սիսնէի մէջտեղ, Զէյթունէն 16 ժամ հե-ռաւորութեամբ: Հետզհետէ զօրք կը հաւաքէր Հալէպի, Ատանայի, Զմիւռնիայի, Գոնեայի նահանգներէն, մինչև Ուզուն-Եայլայէն, Աղձա-Տաղիէն, Ղօղան-Տաղիէն, այն-պէս որ այդ չորս-հինգ նահանգների մէջ գտնված բոլոր թիւրք, ֆիւրդ, Ձերքեղ, Աւշար, Արապ, Ֆէլ-լահ, Զէյպէկ ցեղերի կտրիճ մասը զէնքն էին կոչ-ուած մեր վրայ քալելու համար: Արդէն Մուսթաֆա-րէմը փաշան գոռացած էր թէ «80 վաշտ զօրքով ու բազմաթիւ թնդանօթներով պիտի քալեմ ասի (ա-պրստամբ) Զէյթունի վրայ և երեք օրուայ մէջ քար քարի վրայ չը պիտի թողնեմ՝ և Զէյթունի տեղը գա-րի պիտի ցանեմ...»

Նոյեմբերի վերջին օրը մեր լեռնային որսորդական խմբերն ու լրտեսները մեզ իմաց տուին թէ Էլպիստա-նի բանակը միացաւ Մարաշի բանակին հետ՝ Մուստա-ֆա-րէմի փաշայի հրամանատարութեան ներքեւ. իսկ Ղայիշլի գտնուած բանակը միացաւ Սիսնէի բանակի հետ Գարա փափօր Ալի բէկի հրամանատարութեան ներքեւ:

**ՆՇԱՆԱԻՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԵՐ  
ՖՈՆՈՒՋԻ ՄԷՋ.**

Վեկտեմբերի առաջին օրն օգը պարզուեցաւ. ձո-րերի և հարթագետիների ձիւնը վերացած էր և ձը-մեռնային արևի տկար ճառագայթները կը տարա-ծուէին Ուլիիոյ պատմական լեռների վրայ:

Ուրբաթ օրը, միջօրէէն քիչ առաջ, մեր լեռնա-յին պահապաններէ լուր առինք թէ, Սիսնէի թըր-քական բանակի մի մասը կը բարձրանայ դէպ ի Չու-գուր-Հիսար, մէկ ժամ յետոյ մի լուր ևս հասաւ թէ Թէքիլի կողմը խուռն բազմութեամբ Ձերքեղներ երևան են եկած և թէ բանակի միւս մասն Աղալը կամ Սէկ կոչուած ճանապարհով ֆրանուզի հարաւային կողմէն կը յառաջանայ:

Անմիջապէս հաւաքեցինք մեր պատերազմական ոյ-ժերը և առանձին առանձին խմբերով ուղարկեցինք կարեւոր անցքերի ու նեղ կիրճերի բերանը:

Վէս օրէն յետոյ պ. Ապահը մի խումբ մար-

գիկներով մեկնեցաւ դէպի Չուգուր-Հիսար:

Մի ժամ յետոյ ալ Պ. Հրաչեան ձիւնորնե-  
րի փոքրիկ խմբով ճամբայ ինկաւ դէպի Աղա-  
լը-ի կողմը՝ թրքական բանակը լրտեսելու համար:  
Աղալը կամ Սէկ կոչուած վայրը ֆունուզէն 3 ժամ  
հեռի և բարձր գիրք ունեցող նշանաւոր մի անցք է,  
որտեղէն կարելի է դիտել ամենահեռաւոր ճանապարհ-  
ներն իսկ:

Պ. Հրաչեայի խումբը ժամը 10-ի միջոցներին  
բարձրանալով Աղալը-ի գագաթը, յանկարծ իր դէմ  
գտաւ 3-400 ի չափ թրքական զինուորներ, որոնք  
խառն ի խուռն ցրուած բլուրների ճանապարհների  
վրայ, ձորերի և մացառների մեջէն լռիկ մնջիկ և  
արագ կերպով կը յառաջանային դէպի Աղալը-ի գա-  
գաթը, թիւրք պաշտպօղազների առաջնորդութեամբ.  
սա թրքական բանակի որսորդական մի խումբն էր:  
Պ. Հրաչեան իր հետ ունէր 12 հոգի միայն, որոնց  
եօթը մարթինաւոր էին, իսկ հինգը պարզ չախմակը  
հրացաններով զինուած. յապաղելու կամ վարանելու  
երկար ժամանակ չը կար. թշնամին 30-40 անգամ ա-  
ւելի էր և անոնց ու մեր մէջ հազիւ 400 քայլ էր  
մնացած. պէտք էր կռուել:

Առանց աղմուկի իջնելով ձիերէն, կռիւը կարգադրե-  
ցինք հետևեալ կերպով. — միայն եօթը մարթինները  
գործածել. երբեք չերևալ թշնամիներին. քարերի ետին  
իրարմէ տասնական քայլ հեռի նստելով առաջին նշա-  
նին պարպել հրացանները. ամէն անգամին | հրացան-  
ների տեղը փոփոխել: Երբ թշնամին միամիտ կը յառա-  
ջանար և մօտեցած էր մինչև 200 քայլ, յանկարծ,  
անակնկալ կերպով հրացանաձգութիւնը սկսաւ Հայե-  
րի կողմէն: Առաջին անգամէն 4-5 թշնամիներ գե-  
տին դաշտուցան Հայերի գնդակներէն. թշնամին ոչ  
մի մարդ չէր տեսներ. հաւանականաբար նա կարծեց  
թէ հարկւրաւոր Հայերէ պաշարուած էր. ծիծաղելի  
էր դիտել թիւրք զինուորների շիթթութիւնը, փա-  
խուստը, քարերի ետին պահուելը... մենք անընդհատ կը  
շարունակէինք հրացանաձգութիւնը մեր գրուած  
կարեւոր ուղղագիտական գիրքերէն: Վերջապէս երկու  
ժամի չափ սոսկալի կռիւէ և հրացանաձգութենէ վերջ՝  
արևի մայր մտնելու միջոցները, թշնամին փախուստի  
դիմեց մի ղօլ աղասի և 10-ի չափ սպաննուածներ  
ձգելով պատերազմի դաշտի վրայ: Իսկ Հայերէս ձեռ-  
քէն թեթեւ կերպով վիրաւորուեցաւ «Աւօ» զօրագնդի  
զինուորներէն Ներսէս Գաղանձեան անձնուէր երիտա-  
ւարդը:

Թշնամին Ալի բէկի և Խաիճ օղուի հրամա-  
նատարութեան ներքեւ բանակ էր դրած Աղալը-էն և-  
րեք ժամ հեռի, գրեթէ կէս ժամու ասարածութեամբ մի  
սարահարթի վրայ. ամբողջ բանակավայրը հազարաւոր  
խարոյկներ էին վառուած զինուորներին տաքացնելու  
համար:

(Կը շարունակվի.)

Հ.-Մ.

**ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԻՑ .  
ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ.**

1896 Մարտ 22,

Ջէյթուն կը հանդարտի օրէ օր. հիւանդութիւ-  
նը, որ շատացած էր անթոթութենէ և մասնաւորապէս  
թափուած դիակներէն, այժմ զգալի կերպով նուա-  
զեցաւ: Պայմանագրութիւնը վերջանալէ յետոյ երբ

մեկնեցան Հնչակեան պարագլուխները, հիւպատոսները  
մարդասիրաբար ուղեցին ամէն տեսակ օգնութեան  
հասնել մեր զէյթունցի քաջերուն, այդ մասին ար-  
դէն հարկ եղած տեղերն ալ գրուած էր: Առաջին  
զգալի պէտքը մի բժշկի բացակայութիւնն էր, ուստի  
Այնթապէն Ամերիկեան մի բժիշկ եկաւ որ յուսով ենք  
թէ կը մնայ, մինչև որ վերջ գտնէ հիւանդութիւնը.  
Իրմէ զատ յանձնարարած է Պէրութ, որ վեց բժիշկ  
և դեղագարծ ևս գան երին օգնելու և այս մասին  
գրուած է Արմիր-Խաչի ընկերութեան Պօլսոյ ներկա-  
յացուցչին, որ օգնեն իրեն պէտք եղած վարձքը վը-  
ճարելով այդ բժիշկներուն: Զէյթուն հասած միջո-  
ցին օրական 25-30 մահ կը պատահէր. մէկ երկու  
շաբաթ վերջ 15-20-ի իջաւ այդ թիւը, իսկ վեր-  
ջերս 8-10 ի: տօթթորին առաջին գործն եղաւ, բա-  
ղաքը մաքրել տալ տիրող աղտոգրութիւններէ և մեռ-  
եալները թաղել ուր որ կար: Այժմ բժշկութեան  
կարօտ 2000 հոգի գտնուելով, ինքը հաղիւ օրը 200  
հատը դարմանելու կարող է, եթէ միւս բժիշկներն  
ալ հասնին, լիայոյս ենք թէ հիւանդութեան առաջ-  
քը կանոնի և Ջէյթուն այդ մասին կը հանդարտի  
վերջնականապէս:

Ամէն կողմէ նպաստներ կուգան, գլխաւորաբար  
Եւրոպայէն և Ամերիկայէն. Խալախան և Անգլիական  
հիւպատոսներու ցոյց տուած համակրանքը և օգնու-  
թիւնը արժանի է մասնաւոր յիշատակութեան: Ամ-  
սոյս 11-ին 30 բեռ ալիւր և 12-ին 60 բեռ իւղ, շա-  
քար, հագուստ և այլն եկաւ Իսկէնտերուն — Մարա-  
շի ճանապարհով: 20 ին 100 բեռէ աւելի դար-  
ձեալ ալիւր, իւղ և այլն եկաւ Հալէպէն: Միս  
Ռէքբանը 2,000 ոսկիի գումար մը անձամբ բերաւ  
մասնաւորապէս բաշխելու համար կարօտելոց: Թէպէտ  
ուշ, և ինչքան ալ անբաւական լինին այս նպաստ-  
ները եղած փնաներու համեմատութեամբ, վերստին  
ամէն կերպ շնորհակալեաց արժանի է յաղթական  
Ջէյթունի շուրջ յարուցուած համակրանաց այս շար-  
ժումը:

Թիւրք զօրքերն ալ օրէօր կը ցրուին Ջէյթունի  
չրջակայքէն:

Իզմիրի պահեստի զօրաց վաշտը — որոց 6 վաշտ  
ընկերները Ջէյթուն այգիներու մէջ թաղուեցան —  
ամսոյս 11-ին Այնթապ հասաւ և 17-ին յանկար-  
ծական հրամանի մը վրայ մեկնեցաւ դէպի Էկպէր-  
(Հայ-լեռ), ուր կը լսենք թէ բոլոր Հայերը սպանդ  
նուած և գիւղը աւերած ու կողոպտած են քիւրդե-  
րն ու թիւրքերը: Փառք և շնորհակալութիւն մե-  
սուլթանին, որ վարժուեցաւ պահապան զօրքերը հասը  
ցնելու ամէն բան կորսուելէ և բնաջինջ լինելէ վերջ,  
— մնացածն ալ սոքա կոտորելու և թալանելու հա-  
մար:

Մարտ 20-ին Այնթապ ժամանեցին Արմիր Խա-  
չի ընկերութեան նպաստ բաշխողները, չորս հոգի և  
երկու յոյն թարգման. երկու խումբի բաժնուէրով,  
առաջինը պիտի երթայ Մարաշ-Ջէյթուն և միւսը  
Բիրեճիք — Ուրֆայի վրայով Խարբերդի կողմերը:

Քիլիսը մեծ ջարդ ունեցաւ, որի մասին գեռ  
կատարեալ տեղեկութիւն մը չի կրցանք առնել.  
Խիստ պաշարուած գրութեան մէջ է:

Մարաշ, Այնթապ, Ուրֆա և առհասարակ ամէն  
տեղ միշտ կը տիրէ վախ մը վերստին կոտորածի.  
Կառավարական պաշտօնեայք անխղճութիւնը իտէս-

կանին կը հասցնեն. Հայը աւելորդ տարր մը կը նը-  
կատուի այլևս Թուրքիոյ մէջ:

Մարտ 21-ին կանուխ ճամբայ դրուեցան դէպի  
Հալէպ Այնթապի 35 բանտարկեալները (մէկ մասը կը  
մնայ դեռ տեղական բանտը), ժողովուրդեան ամենամի-  
րելի մէկ օրուան, Աւագ հինգշաբթիի առտուն, կար-  
ծես յատուկ հարուած մը տալու համար նորա կրօ-  
նական ջերմ զգացումներուն: Բայց հակահարուած մը  
կը լինի դա իրենց համար. հայ ժողովուրդը օրէ օր  
աւելի կը հասկանայ իր դիրքը. Թուրքի դէմ ներ-  
կային ու ապագայի մէջ բռնելիք ընթացքը: Ատելու-  
թեան փոխադարձ անհուն բոցով մը կը վառուի Հայ  
ժողովուրդը:

Այդ բանտարկեալներն ամբաստանուած են ոմանք  
իբր մարդասպան և այլք Զէյթունի օգնութեան պէ-  
տէլ (իրենց տեղ վարձու զինուոր) զոհողներ: որ-  
պէս ամբաստանուած են Հալէպ եղողները: Բոլորն ալ  
Թուրքերու կողմէն վկայուած են (իրենց հարստու-  
թեան համար աւելի ճիշդը), բոլորն ալ իբր թէ  
մարդասպաններ են և մանակցած կոտորածի, աւարա-  
ռութեան հրճիգութեան. այսպէս լինելը խնամով  
հաստատուած և արձանագրուած է Թուրք կառավարու-  
թեան կողմէ:

Այս տեղի Իւլէման երը (կրօնապետները) ֆէթ-  
վա (արտօնագիր) մը հանած են թէ ներկայ խնդիր-  
ներու մէջ տուտ վկայութիւնը ներելի է: Ստորև  
կը գնենք նաև Այնթապի վերոյիշեալ բանտարկեալ-  
ների անուանց ցանկը:

Պատուելի Գրիգոր, Նիկողոս աղա Նազարէթեան,  
Սարգիս աղա Սահակեան, Գալուստ աղա Ղազարեան,  
Պետրոս աղա Աշխեան, Փիլիպպոս էֆ. Սարգիսեան,  
Կարուճ Գարամանիկեան, Աւետիս Մէրճանեան, Աւե-  
տիս Բարսեղեան, Ճիրճի Չամիչեան, Գօք. Գէորգ Բէլ-  
լէեան, Փ. Յովհաննէս Աննեան, Գրիգոր Նիզիպլեան,  
Կարուճ Վաստեան, պ. Արմենակ Նազարէթեան, Գէորգ  
Պալեան, Մանուկ Բէտէ-Մանուկեան, Տէօփլէթ Ճին-  
կեանեան, Մանուկ Պաղտօեան, Եուսիֆ Բիւրքճեան,  
Պէրպէր Պետրոս, պ. Յովսէփ Սահակեան, Նազարէթ  
Բիւրքճեան, Նազար Հալէպլեան, Կարուճ աղա Մէր-  
ճանեան, Յովսէփ Առաքելեան, Մանուկ Փափազեան,  
Միրճան Գամաճեան, Արմենակ Գրիգորեան, Ռըզգ  
Մոսքոֆեան, Արթին Մոսքոֆեան, Յակոբճան Մոսքոֆ-  
եան, Յակոբճան Մինասեան, Սարգիս աղա Հալաճեան,  
Յակոբ Պալեօղեան:

Ասոր տունը կ'ըզպտուած, կինը, տղան սպաննուած  
և ինք սաստիկ վերակորուած է. հիւանդանոցէն առին  
ու տարին:

Սուէտիան, որ վեց ամիսէ ի վեր պաշարման մէջ  
էր, այժմ սաստկացած է այդ պաշարումը. Զէյթու-  
նէն վերադարձող գունդերէն մի մասը գնաց հոն. շը-  
ջակայ թիւրք բաշիրօզուք ժողովուրդն ալ զինուած գուն-  
դագունդ կը դիմէ հոն, իհարկէ աւարելու համար:  
2ի գիտենք թէ հետանքը ինչ կը լինի: Բէյրութի  
առջէն սպասող 3 Անգլիական մարտանաւերն ալ ե-  
կած են Սուէտիա, նոյնպէս և Բէյրութի վալին. ման-  
րամասնութիւնները կը պակասին դեռ:

ԵՌԱՆԻ.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ.  
ՀԵՌԱԳԻՐ ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ.

Կ. Պօլիս, 23 Ապրիլի.

Նշե՛կ վեց մեծ պետութիւնների դեսպանների ա-  
ռաջին թարգմանները Զէյթունի գործերի մասին հե-  
տեւեալ դիտողակիրը ներկայացրին արտաքին գործե-  
րի մինիստր Թէփթիկ փաշային. —

«Վեց Գեսպանատները ըսել են Զէյթունի  
համար մի Մահմեդական Գայմազամի անուա-  
նումը և Գուռը կէս-պաշտօնական կերպով իրանց  
հաստատել է այդ անուանումը: Գուռը անզի-  
տակ է, թէ մի Վրիստոնեայ Գայմազամի ան-  
ուանումը նախապէս պայմանագրված էր բարենո-  
րոգումների նախագծի մէջ և ապա ընդունված  
էր Գեսպանատների կողմից՝ իբր Զէյթունցիներ-  
ին առաջարկված պայմաններից մէկը, Զէյթու-  
նում թշնամութիւնների դադարման համար: Այդ-  
պիսով Գեսպանները պատասխանատուութեան տակ  
լինելով, վճռական կերպով հրաւիրում են Գուռը  
յարգելու իր յանձնառութիւնները»:

Թարգմանները պնդեցին որ խնդիրն անմիջապէս  
պէտք է նկատողութեան առնվի, և հէնց այժմ մի-  
նիստրների խորհուրդը նիստ է գումարել խորհրդակ-  
ցելու համար իր տալիք պատասխանի մասին:

«Ա Պ Տ Ա Կ»

ԵՐԳԻԾԱԲԱՆ ԱԿԱՆ-ԸԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

«ԱՊՏԱԿ»ը նրատարակելով մենք ուզում ենք հայ յեղա-  
փոխական գործող մարմինն տալ մի նոր գէնը — երգիծաբանի  
ապտակը: Այդ ապտակը թաթախված հայ քաջերի արիւնով  
պէտք է հարուածէ այն ամէնքին, թէ արտաքին եւ թէ ներ-  
քին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակորդ յայտնը-  
վելով յեղափոխութեան, թշնամի եւ հակառակ են յայտնվում  
նաև հայ ժողովուրդային քաղաքութեան, աշխատաւորի, գեղջուկի  
եւ քանուրթի շահերին:

«ԱՊՏԱԿ»ը պէտք է ղեկավարվէ այն վսեմ գաղափարնե-  
րով, որոնք ժամանակիս ամենատառաջում գաղափարներն են  
հանդիսանում հանրամարդկային առաջադիմութեան մէջ, գաղա-  
փարներ, որոնք արդէն փայլուն կերպով յայտարարված են հայ  
յեղափոխական ասպարէզում եւ հայ յեղափոխականի գործե-  
րով ու արիւնով արձանագրված են Հնչակեան դրօշակի վրայ:

«ԱՊՏԱԿ»ի լեզուն կը լինի միշտ անկեղծ. համարձակ, շե-  
տակ, համոզված եւ խիստ: Իր հարուածի տակ նա կը ղնէ ա-  
մեն հասարակական հիմնարկութիւն եւ հասարակական անձեր,  
որ հայ յեղափոխական ատող գաղափարին եւ ժողովրդի շա-  
հերին վնասակար են:

«ԱՊՏԱԿ»ի բոլոր համարներում միշտ կը գետնողվեն նկար-  
ներ քաղաքական պարունակութեամբ:

ԱՕԳ

«ԱՊՏԱԿ»ի ապրիլ ամսվայ 12-ը համարով աւարտում է նրա  
հրատարակման երկրորդ տարեշրջանը: Մեր այն քաժամորդնե-  
րը, որոնք ցանկանում են նորոգել իրանց քաժամորդայնութեան  
«ԱՊՏԱԿ»ի երրորդ տարեշրջանի համար, հրաւիրվում են կան-  
խապէս անել այդ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ  
և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —  
M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush.  
London W. [Angleterre].